

ՔԱՐՈԶ

(29 հոկտեմբեր, 1989 թ.)

«Զբարձրեալն գՔրիստոս արասցուք մեզ ապաւեն, զի ոչ հասցեն առ մեզ չարք և տանջանք մի մերձեցեն ի յարկս մեր» (Ժամագիրք):

Մարդու կեանքի մէջ կայ երկու տեսակի գարթօնք: Առաջինը, ուղղակիօրէն կը խօսի մեր ֆիզիքական գարթօնքի մասին, իսկ երկրորդը՝ հոգևոր գարթօնքն է, որը կը զարգանայ աղօթքով, առ Աստուած ուղղուած մեր արտէն բխած խօսքով: Ամէն կիրակի, երբ եկեղեցի կուգանք, մեր ս. խորանէն հաւատքի պատգամ մը առած կը դառնանք մեր տուները, նորոգուած կեանքով: Այսօր, մեր բոլորի հաւաքով, որպէս ապրող եկեղեցի, եկած ենք հաղորդուելու աղօթքի այս բառերով. «Քրիստոս դարձնենք մեր ապաւենը, որպէսզի չարութիւնն ու տանջանքները հեռու մնան մեր յարկերէն»: Ինչպէ՞ս պէտք է հաղորդուիլ աղօթքի այս բառերով: Առաջին հերթին մեր առաջ կը դրուի հիմնական հարցը՝ հաւատքի ճանապարհով զԱստուած ընդունելու, գՔրիստոս ճանաչելու որպէս ապաւենը մեր կեանքի, վէմն ու աղբիւրը կեանքի: Որովհետեւ ամէն քրիստոնէայ կը հաւատայ, որ Աստուած ինքն է ճարտարապետը տիեզերքի, և Աստուածային կենարար հոգևոր ներդրումը իր մարմնաւորումը ստացաւ Քրիստոսի աշխարհ գալուստով, անոր ծնունդովն ու քարոզութիւններով, անոր խաչելութեամբ ու մեռելներէն յարութեամբ: Այս ոգիով կազմաւորուած է Քրիստոսի եկեղեցին և այս նոյն ոգիին հարազատօրէն կառչած մնացած է հայ քրիստոնէան, որ իր Ա. եկե-

ղեցու խորանէն ճաշակած է յաիտենական կեանքի համը:

Եթէ պահ մը լրջութեամբ կարդանք դարաւոր մեր Ա. եկեղեցւոյ կեանքը, որը հայելին է իր հաւատացեալներու կեանքի պատմութեան, ահա այնտեղ կը տեսնենք որ բոլոր ժամանակներուն մէջ կրօնական մեր ապրումներուն մէջ հաւատքի շեշտը նոյնն է եղած. «Զբարձրեալն արասցուք մեզ ապաւեն...»: Հաւատքի այս շեշտը կազմաւորուած է մեր մէջ, մեր ներքին աշխարհը դարձնելով ամբողջ, որպէսզի հեռու պահենք չարն ու տանջանքը մեր առօրեայէն: Եթէ ֆիզիքական ցաւի ու տանջանքի մասին է մեր խօսքը, ապա այդ պատմութեան իսկ փորձով անխուսափելի է դարձած և անկարող հաիտենապէս ընկրնելու մեր ժողովուրդի կամքն ու ապրելու ոգին: Խօսքը կը վերաբերի հոգևոր կեանքին, անխախտ պահելու մեր քրիստոնէական ապրումներով միահիւստուած նկարագիրը: Մեր նախնիք, մեր մեծերը, իրենց պատմութեան մէջ տանջանքն ու ցար, բազում արհաւիրքները երբեմն կըրած են պարզապէս որովհետեւ հարազատ են ուզած մնալ Քրիստոսի Գողգոթայի ճանապարհին: Այս ոգին խարսխուած է մեր ժողովուրդի արտի խորքին: Անոր լաւագոյն վկայութիւնը այսօր իսկ կ'արտայայտուի: Կը տեսնենք մեր իսկ սեփական աչքերով, թէ ինչպիսի վճռականութեամբ բազում դժուարութիւններ կը յաղթահարուին մեր ժողովուրդի զաւակներու կողմէն, վերականգնելու համար կեանքն ու կենսունակութիւնը աղէտեալ շրջաններու



մէջ: Սա ինքնին անսահման հաւատքի կենդանի արտայայտութիւնն է:

Սիրելիներ, կիրակի այս առաւօտ եկած ենք աղօթելու մեր հոգու խաղաղութեան համար ու մեր մէջ հաստատելու հաւատքի էական ապրում մը: Եւ մեր աղօթքը պէտք է անպայմանօրէն կապուի մեր հանապազօրեայ խնդիրներուն, մեր հայրենիքին՝ քաղաքական առումով, ընկերային կեանքի առումով, տնտեսական առումով, բայց առաւելաբար հոգևոր զարթօնքի առումով:

Հոգևոր զարթօնք կ'ապրի այսօր մեր հայրենիքը: Եւ ես, որպէս Ս. Էջմիածնի միաբան, ծառայութեան կանչուած Գանատայի Թորոնթօ քաղաքը, անսահման ուրախութեամբ կը վկայեմ այս նոր վիճակը՝ հոգևոր զարթօնքի շրջանը և կը վերլիշեմ սա խօսքը. «Անձրևները իջան, և գետերը լորդացան, հովերը փչեցին և զարկին այդ տան, բայց չկործանեցաւ, որովհետև ժայռի վրայ էր հաստատուած» (Մատ. Է: 25):

Փոթորիկներէն անսասան մնացած տունը մեր Ս. Եկեղեցին է, որը կառուցուած է ժայռի վրայ, ու իր հաւատացեալներու, իր ժողովուրդի գաւակներուն կեանքը խարսխած նոյն հաւատքի ժայռին վրայ:

Սիրելի հաւատացեալներ, Հայաստանն ու մեր երկու Սփիւռքները՝ խորհրդային Սփիւռքն ու արտասահմանը միացած են մեր Ս. Եկեղեցիով: Ս. Էջմիածնին որպէս առաքեալներ հոգևորականները կ'երթան տարբեր գաղութներ, որպէսզի առանձին համայնքներու մէջ, մեր ժողովուրդի մէջ արթնցնեն, արթուն պահեն հայ Քրիստոնէային հաւատքը, որպէսզի զԱստուած ընդունին որպէս մեր ապաւենը:

Հոգևոր զարթօնքը արտասահմանի հայ գաղութներէն ներս նոր թափ կը ստանայ, երբ տեսնէ հոգևոր զարթօնքը հայրենիքի մէջ: Քանզի հայրենիքը աղբիւրն է, մայրն

է, իրեն է յանձնուած դաստիարակի պաշտօնը բնական կերպով:

Ես իմ խոնարհ ծառայութիւնը կ'մատուցեմ Գանատայի Թորոնթօ քաղաքին մէջ, ուր կապրին շուրջ քսան հազար հայեր: Անոնք ևս, ինչպէս մեր միւս բոլոր գաղութները, սկսած են հետզհետէ կազմակերպուիլ ջարդերէն յետոյ և 1927 թուականին կազմած իրենց եկեղեցին: Մինչև 60-ական թուականները, թիւի իմաստով գաղութը շատ փոքր է եղած: Վերջին քրսան տարիներու ընթացքին, սակայն, գաղութը մէկ անգամէն աճած է յատկապէս Պոլիսէն, Եգիպտոսէն, Լիբանանէն ու Պարսկաստանէն գաղթած հայերով: Այսօր գաղութն ունի իր եկեղեցին, իր չորս ամեցօրեայ, երկու շաբաթօրեայ և մէկ կիրակնօրեայ դպրոցները աւելի քան հազար աշակերտներով: Իր հայկականութեամբ և իր բազում հայկական ձեռնարկներով խանդավառ գաղութ մըն է Թորոնթօն: Հայրենիքի և Ս. Էջմիածնի հետ իր կապը օրէցօր կ'աճի, մանաւանդ այս վերջին շրջաններուն: Ձեզի կը բերեմ Թորոնթօյի Ձեր հայ եղբայրներու և քոյրերու կապուածութիւնը: Բնական է, իմ վերադարձին այնտեղ պիտի պատմեմ նաև Հայաստանի ներկայ դրութեան մասին, Ղարաբաղի հերոսական պայքարի մասին: Ստեղծուած կացութիւնը անշուշտ կը մտահոգէ բոլոր արտասահմանը: Բայց այդ բոլորի մէջ, մեր իրաւունքներու արդար պահանջքի ճանապարհին, հայրենիքի տնտեսութեան դժուար պահերուն և հոգևոր զարթօնքին մէջ հայը պէտք է մնայ անխախտ իր հաւատքի կեանքին մէջ, ու միացած իր հաւատքի կեանքով: Ահա այն ժամանակ մեր այսօրուայ աղօթքի բաները կը դառնան նաև մեր կեանքի հայելին, այնպէս ինչպէս մեր պապերունը:

